

Համարը N 1

Տիպը Պաշտոնական
պարզաբանում

Սկզբնաղբյուրը ՀՀԳՏ 2009.08.15/24(342)

Ընդունող մարմինը Հեռուստատեսության և
ռադիոյի ազգային
հանձնաժողով

Ստորագրող մարմինը Հեռուստատեսության և
ռադիոյի ազգային
հանձնաժողովի նախագահ

Վավերացնող մարմինը

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 30.07.2009

Տեսակը Մայր

Կարգավիճակը Գործում է

Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 30.07.2009

Ստորագրման ամսաթիվը 30.07.2009

Վավերացման ամսաթիվը

Ուժը կորցնելու ամսաթիվը

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 30 ՀՈՒԼԻՍԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ N 1 ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

30 հուլիսի 2009 թ.

N 1

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ

«ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 17 ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հեռուստառադիոընկերությունների հիմնադրման ժամանակ կամ դրանից հետո օտարերկրյա կապիտալի մասնակցության բաժինը չպետք է հավասար կամ ավելի լինի հեռարձակող կազմակերպության որոշումների ելքն ապահովող կապիտալի չափից: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքներով սահմանված են իրավաբանական անձանց կառավարման բարձրագույն մարմինների կողմից իրենց իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման անհրաժեշտ ձայների քանակները: Ընդ որում, տարբեր հարցերի վերաբերյալ որոշումներ ընդունելու համար սահմանված են ձայների տարբեր քանակներ: Նշված օրենքներով նախատեսված ձայների նվազագույն քանակը, որը պահանջվում է որոշումների ընդունման համար, ձայների մեծամասնությունն է, որը կազմում է իրավաբանական անձի կառավարման մարմնում ձայների հիսուն տոկոսից ավելին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87 հոդվածով՝ պաշտոնապես **պարզաբանում ենք**

հեռուստառադիոընկերությունների կանոնադրական կապիտալում օտարերկրյա բաժնեմասը չի կարող գերազանցել կանոնադրական կապիտալի հիսուն տոկոսը, իսկ կոռպորատիվում՝ օտարերկրյա անդամների թիվը չի կարող գերազանցել կոռպորատիվի անդամների ընդհանուր թվի հիսուն տոկոսը:

Նախագահ

Գ. Ամալյան